ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69,
(37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 28 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ Է/40/1627-24 առ 24 07 2024թ.

«Առգուս Սոլուշնս» ՍՊԸ
տնօրեն
Ա. Հովհաննիսյանին

(№ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-3/24-01/146 պայմանագրի միակողմանի լուծման մասին)

Հարգելի՛ պարոն Հովհաննիսյան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության և «Առգուս Սոլուշնս» ՍՊ ընկերության միջև 2024 թվականի ապրիլի 4-ին կնքվել է № ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-3/24-01/146 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), համաձայն որի «Առգուս Սոլուշնս» ՍՊԸ-ն պարտավորվել է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարել Պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված դոզաչափական հաշվիչները (Պայմանագրի 1.1 կետ):

Պայմանագրով սահմանված է.

- Գնորդն իրավունք ունի՝

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի:

- 2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

Պայմանագրի անբաժան մաս կազմող Հավելված 1-ով ապրանքի մատակարարման ժամկետը սահմանված է՝ «Ապրանքները մատակարարել պայմանագրի կնքման օրվանից մինչև 01.05.2024թ.», սակայն Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված բնութագրերով ապրանքները մինչ օրս չեն մատակարարվել:

Հաշվի առնելով Պայմանագրի դրույթները՝ տեղեկացնում եմ, որ «ՀԱԷԿ» ՓԲ ընկերության կողմից միակողմանի լուծվում է «ՀԱԷԿ» ՓԲԸ և «Առգուս Սոլուշնս» ՍՊԸ-ի միջև 2024 թվականի ապրիլի 4-ին կնքված № ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-3/24-01/146 պայմանագիրը

և առաջարկում եմ ծանուցվելու օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում «ՀԱԷԿ» ՓԲ ընկերության «Կոնվերս բանկ» ՓԲԸ 1930000199200100 հաշվեհամարին վճարել պայմանագրի (602 000 ՀՀ դրամ) և որակավորման (903 000 ՀՀ դրամ) ապահովումները:

Հարգանքով՝

ԳՏՏ - ԸՀԳՏ Ս. Մաթևոսյան

Կատ.
ԳԸԲ գլխավոր մասնագետ –
խմբի ղեկավար
Հռիփսիմե Ռամազյան
Հեռ. 010-20-04-91